

Արձանագրություն թիվ 4

26 նոյեմբերի 2015թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամներ: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների գրաֆիկների հաստատում:
/զեկ. Ա.Շ.Մարգարյան/
2. 2015-16թթ. ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատում:
/զեկ. Ա.Շ.Մարգարյան /
3. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ ըստ ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի հերթական նիստին նախատեսված էր երկու հարց: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2015-16թթ. ուստարվա I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը և նշեց, որ վերջինս քննարկվել է նաև ուսանողների շրջանում: Անցկացվեց ընդանուր քննարկում և առաջարկվեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ - 2015-16թթ. ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն՝ հաստատելու այն:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը և ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2015-16թթ. ուստարվա առաջին կիսամյակի ստուգաքային շրջանի, քննաշրջանի և կոնսուլտացիաների

Ժամանակացույցը՝ 14.12.2015թ.-25.01.2016թ., որը կազմվել է համաձայն ուսումնական պլանի: Նա ընգծեց, որ հարցը համապատասխան ամբիոնների նիստերում մանրամասնորեն քննարկվել և որոշվել է եզրափակիչ և առանց եզրափակիչ գնահատմամբ յուրաքանչյուր առարկայի քննությունների և ստուգարքների անցկացման ձևը (գրավոր, բանավոր, թեստային) և հարցատոմսի նմուշները:

Ձեկուցողը հանձնարարեց ամբիոնների դասախոսներին քննաշրջանը կազմակերպել ըստ հաստատված ժամանակացույցի, իսկ դեկանատին՝ սահմանել հսկողություն քննաշրջանը անցկացնել համաձայն համապատասխան կարգի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Հ.Միրզոյանը, Մ.Հարությունյանը, Ա.Զիբուխյանը: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն 2015-16թթ. ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի գրաֆիկը:

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետի որոշ կարգապահական հարցեր, ուսանողների դասերին հաճախումների արդյունքները: Նա ներկայացրեց այն ուսանողներին, որոնք ունեն 30-ից ավելի անհարգելի բացականչեր և դեկանատի կողմից ստացել են նկատողություն , այն ուսանողներին, որոնք ունեն 60-ից ավելի անհարգելի բացականչեր և ներկայացվել են տնօրենի կողմից խիստ նկատողություն ստանալու, և նաև այն ուսանողներին /Սևակ Ամիրյան, Հովսեփ Ասիլյան և Դավիթ Մեջինյան/, որոնք ուսումնական պարապմունքներից ունեն 90 և ավելի ժամ անհարգելի բացակայություն , հետևաբար ենթակա են հեռացման: Մարգարյանը մտահոգություն արտահայտեց այն մասին, որ նշված գրեթե բոլոր ուսանողները „Կիրառական արվեստ,, չորրորդ կուրսի ուսանողներ են:

Ձեկուցողը հանձնարարեց կուրսղեկ Դ.Զիբուխյանին հետևել վերոնշյալ ուսանողներին կարգապահությանը և տանել բացատրական աշխատանքներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Հ.Միրզոյանը, Ա.Զիբուխյանը, Դ.Զիբուխյանը և Ս.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ -Դեկանատը՝ ուսումնական խորհրդատուի հետ համատեղ դեկտեմբեր ամսվա ընթացքում ուշադրություն դարձնեն հատկապես չորրորդ կուրսի ուսանողների հաճախումներին և կարգապահական հարցերին:

ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Շ.Մարգարյան

Ք.Հ.Մխիթարյան